

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Տիֆլիս. Тифлис, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Ցայտարարութիւններ համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անսպասելի երևոյթներ. Սթափեցնող ազդա-
րարութիւն. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էջմիածնի
անդրանիկ ատուածաբանը. Նամակ Բալխա-
նիից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ. Իսլամ
և պատերազմ. Նամակ Բուխարայից. — ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐՎԱՆ.
Շվեյցարական ազատ տօները.

ԱՆՍՊԱՍԵԼԻ ԵՐԵՒՈՑՈՒՆԵՐ

Ջարմանալ պէտք է, որ տասնիններորդ
դարի վերջում լուսաւորված երկրների
կենտրոններում տեղի ունեն մի շարք երե-
ւոյթներ, որոնք յիշեցնում են միջին դարե-
րը. Պարզի նման համաշխարհային քաղա-
քակրթական մի կենտրոնում երևան է եկել
Կուէրօն անունով մի կին, որ գուշակու-
թիւններով է պալապուծ և գրաւում յա-
ճախորդների մեծ լէգէօն: Նշանաւոր մար-
դիկ, հասարակութեան միջին և բարձր
դասակարգերին պատկանող մարդիկ դիմում
են այդ հմայող կնոջ և ժամերով սպասում
մինչև հասնի իրանց ընդունելու հերթը:
Սակայն Կուէրօն միայն չէ. նա միայն աչ-
քի ընկնող մի պատգամալուստ է: Նոյն Պա-
րիզի մէջ բազմաթիւ կանայք պարապում
են գրեթե ցամաքային և գուշակութեան
ներով և այնքան լայն ասպարէզ ունեն իրանց
արհեստի համար, որ նորերս դիմողներ ե-
ղան Փրանսիական կառավարութեան խնդ-
րելով, որ նա քաղաքացիական որոշ կեր-
պարանք տայ այդ արհեստին, ինչպէս և
ազատ գործունէութեան թոյլտուութիւն:

Այն, ինչ կատարվում է Պարիզում, տեղի
ունի և շատ ուրիշ տեղերում: Եւ Եւ-
րոպական Եւրոպայում և թէ Բուսաստա-
նում: Ժողովրդի բոլոր խաւերի մէջ կան
անձինք, որոնք սնահաւատ են, նախա-
պաշարմունքներով տոգորված, և պատրաստ
են իրանց միջնորդութեան և հանգստացնելու
համար դիմել ամենակասկածելի և խոր-
դաս անձերի օգնութեան և խորհուրդնե-
րին: Եւ չը նայելով, որ այդ դիմումները
ոչ մի գրական, բարերար հետեւանքի չեն

հասցնում, նրանք մի սխալից անցնում են
մի ուրիշ սխալի, թողնելով մի գրեթե
անցնում են մի ուրիշ խորհրդի և շար-
ւատանի ձեռքը, այդպիսով մի դժբաղ-
դութիւն փոխարինելով միւս դժբաղդու-
թեամբ:

Ականատես լինելով այդ տեսակ փաստե-
րին, չը պէտք է կարծել, որ մտաւոր ա-
ռաջագիմունքեան գործը կանգ է առել:
Իսկ նշանակում է միայն, որ լուսաւորու-
թեան գործը չէ տարածվում ժողովրդի
բոլոր խաւերի վրա: Ազգաբնակչութեան
մեծագոյն մասը զրկված է դպրոցից, գի-
տութիւնից: Ժողովրդական մասսան շատ
տեղ թողնւած է առանց կրթութեան և
հոգատարութեան: Եւ այն միջոցին, երբ
գիտութիւնը հրաշքներ է առաջացնում
լուսաւոր փոքրամասնութեան մէջ, ազգաբնակչութեան ընդարձակ խաւե-
րը շարունակում են մնալ տգիտութեան
և խաւարի մէջ: Կրօնի ներկայացու-
ցիները, շնորհիւ իրանց յետաճանցու-
թեան, կորցրել են իրանց հեղինակու-
թիւնը, իսկ նրանց չէ փոխարինել նոր
ուսուցիչը և դեկավարը: Եւ ահա այդ
ժողովրդից դուրս եկած մարդիկ, որոնք
հանգամանքների շնորհիւ թէև ձեռք են
բերում հարստութիւն և զիրք, այնու ա-
մենայն մնում են նոյն նախապաշար-
մունքների գերի, շատ անգամ անբարոյա-
կան անձնաւորութիւններ:

Ոչ, գիտութիւնը և քաղաքակրթու-
թեան շարժումը կանգ չեն առել և չեն
թուլացել: Սակայն գիտութեան ժողո-
վրդացման գործը այնպէս չէ զբաղ-
ված, ինչպէս հարկաւոր է: Մասայի կրթու-
թեան հոգսը չէ դարձել ամեն տեղ կանա-
քի առաջին հարցը: Գիտութիւնը կանգ չէ
առել, նա առաջ է գնում: Բայց նրան
պէտք է տարրացնել ժողովրդի մէջ և
այդպիսով հիմնաւորապէս մաքառել նախա-
պաշարմունքների թաղաւորութեան դէմ,
որով միայն կարելի է վերջ տալ գրեթե
ներքին, հմայող կանանց և միամիտների
խաբող շարժաւանների գործունէութեան:

Նուում:—Կիսավայրենի բնակիչները թափառում
էին անտառներում, կերակրվում էին պտուղնե-
րով ու որսի մտով: Որտեղի միակ զէնքը հա-
տարակ աղեղն էր, փոքրիկ փայտէ լարձիկները
չինված էին գետերի, լճերի վրա: Այս զբա-
ղին շնորհիւ ինքները միացած էին ափերի հետ
փոքրիկ կամուրջներով:—Սրանք պաշտպանում
էին իրանց տէրերին թշնամիների և զազանների
յարձակումներից (այս տները հետքերը դեռ մնում
են): Հնագէտները այժմ գտնում են գետերի,
լճերի ափերում զանազան իրեր, գործիքներ,
որոնք պատկանում են երեք յայտնի շրջանի
1) քարէ, 2) բրոնզէ և 3) երկաթէ: Քարէ
շրջանը թաղված է անյայտ հուշեան ծոցում:
Բրոնզէ շրջանը համարվում է Հռոմի հիմնա-
դրութիւնից նախընթաց: Երկաթէ շրջանը հաշ-
ւում է հելլենիստիկ ժամանակակից:

Հելլենիստիկ պատկանում են հին ֆրանսիա-
կան մեծ ցեղին (Souche gauloise): Սրանք
կազմում են Շվեյցարիայի պատմական ամենա-
հին բնակիչները: Երբ առաջին անգամ հելլեն-
իստի մտնում են հին Շվեյցարիան, այստեղ
նրանք գտնում են մի փոքրիկ կիսավայրենի
ցեղ, որը ապրում էր բրոնզէ շրջանից շատ ա-
ռաջ: Պատմութիւնը ասում է, որ տեղական
փոքրիկ ցեղը փոքրահասակ էր և թղլ կազ-
մուածք ունէր, իսկ հելլենիստի բարձրահասակ
էին, քաջ, թարմ, աշխատասէր, ֆիզիկական
ուժեղ, մտաւորապէս զարգացած: Վերջինները
նուաճում են տեղական բնակիչներին, որոնք
չուտով ձուլվում են յաղթողներին, և բնա-
կութիւն են հաստատում Շվեյցարիայում: Հել-
լենիստիկ ժողովուրդն են երկրի մէջ պատկերով դը-
րամ, թաղման մի նոր ձև (Tumulus) հողա-

ՍԹԱՔՅԵՆՈՂ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փրանսիական «Temps» լրագրի յոդուածը՝ օտ-
մանեան կառավարութեան հասցէին, ինչպէս և
պէտք էր սպասել, մեծ ուշադրութիւն գրաւեց:
Այն յանգիւղութիւնը, որով Բ. Դուռը և սու-
թան Արդու-Համիդը սկսել են վերջերս վերա-
բերվել Բերլինի դաշնագիրը ստորագրող մեծ
պետութիւնների պահանջներին, այն յամառու-
թիւնը, որ սուլթանի կառավարութիւնը ցոյց է
տալիս կրէտական հարցի լուծման, հայ փախ-
տական-դադլականների հայրենիք վերադառնա-
լու հարցի մէջ, վերջապէս այն կոպիտ մերժու-
մը, որով Բ. Դուռը պատասխանեց Փրանսիա-
կան կառավարութեան, հրաժարվելով վճարել
1896 թւի Կ. Պոլսի կոտորածի ժամանակ ֆը-
րանսիական հպատակները կրած վնասները,—
չէին կարող, վերջապէս, անուշադիր թողնել
մեծ պետութիւնների և մանաւանդ Փրանսիա-
կան և ռուսաց կառավարութեան կողմից: Եւ
«Temps» լրագրի յոդուածը, ինչպէս և նկատեն
ընթերցողները ներքեւում առաջ բերած տողե-
րից, ոչ թէ լրագրի անձնական կարծիքն է, այլ
ներքնչված է ֆրանսիական արտաքին գործերի
նոր միջխտոր Կիւլաստէից, որը այդ առիթով
մտքերի փոխանակութիւն է ունեցել եւրոպա-
կան միւս կաթնէտների հետ:

«Թիւրքաց կառավարութեան մերժումը—ա-
սում է «Новое Время» լրագիրը մի առաջնոր-
դող յոդուածը,—այնպիսի կոպիտ և անբարոյ-
քանդակի ձեւով է արված, որ ճշնայն այդ յանդու-
ղին տեսնել միանգամայն բաւական է յիշեցնե-
լու Բ. Դուռն, թէ նա շատ է առաջ գնում և
նրա այդ յանգիւղութիւնը էժան չի նստի նրան:
Փրանսիական արտաքին գործերի նոր միջխտորը
այդ շատ լաւ հասկացաւ: «Temps» լրագրի ե-
րէկվայ յոդուածը, անուշադիր, թելադրված է նը-
րանից: Եթէ այդ յոդուածը հրատարակվէր ան-
միջապէս թիւրքաց կառավարութեան յանդուղն
պատասխանից յետոյ, կարելի էր համարել նը-
րան իբրև Հանօտօր յաջորդի անձնական կար-
ծիքների արտայայտութիւն, բայց պ. Կիւլաս-
տէն սպասեց մի քանի օր, որը, անտարակոյս,
նուրից մտքերի փոխանակութեան միւս մեծ
պետութիւնների կաթնէտների հետ և այժմ,
իստեղծով բոլոր մեծ պետութիւնների անունից,
նա ուղղակի հասկացնում է սուլթանին և նրա

խորհրդականներին, որ եթէ Թիւրքիան մտադիր
է դէն գցել իրանից որ և է պատասխանատու-
թիւն իր մայրաքաղաքի փողոցներում կարգը
պահպանելու համար, այն ժամանակ մնում է, որ
Եւրոպան ինքն կայացնի կարևոր որոշումներ,
որոնք լոյզիկապէս բոլորում են Բ. Դուռն անդո-
րութիւնից:

«Այդ սթափեցնող ազդարարութիւնը շատ
յարմար ժամանակին է արված և պատիւ է բե-
րում Կիւլաստէին: Թիւրքաց կառավարութիւնը
վերջերս այնպիսի տուն և գործողութեան այն-
պիսի եղանակ է ընդունել մեծ պետութիւնների
վերաբերմամբ, որ պետութիւնները չեն կա-
րող թողալով այդ, ինչքան և երկար լինի նը-
րանց համբերութիւնը: Ժամանակ է վերջ դնել
դրան և իրերի հասարակ լոյզիկան ասում է, որ
այդ պաշտօնի կատարման մէջ առաջին դերը
պատկանում է Ռուսաստանին և նրա դաշնա-
կից Փրանսիային:

«Մենք կարող ենք միայն ուրախանալ, որ պ.
Կիւլաստէն ճշնայն առաջին անգամից հասկացաւ
Բ. Դուռն վրա ազդու ներգործելու անհրաժեշ-
տութիւնը և կարողացաւ օգուտ քաղել դէպքե-
րից, որ ներկայացրեց նրան ֆրանսիական հը-
պատակներին վարձատրելու գործը: Պարզուով
լիակատար հաւատարմութեամբ կարող են սպա-
սել, որ այդ գործում Ռուսաստանը ինչպէս
հարկն է կաշակել իր դաշնակցին և Բ. Դուռն
էժան չի նստի այն յանդուղն տոնը, որով նա
պատասխանեց Փրանսիական կառավարութեան:

Իբրև լրումն այդ նշանաւոր քայլի, լրագիրը
ներքէ հարգում են, որ ռուսաց դեսպան Զի-
նովիեւի այս օրերս յանձնեց Բ. Դուռն մի նոր
յիշատակալիք, որով յայտնում է, որ եթէ
թիւրքաց կառավարութիւնը միջոցներ ձեռք չի
առնի վերահաստատել հայրենիքում Ռուսաս-
տան փախած հայերին, նա ամենամանր պա-
տասխանատուութիւն առաջ էր բերել իր համար:
Կեսական Զինովիեւի առաջարկում է նշանակել
այդ գործի համար առանձին կոմիտսը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԶՄԻԱԾՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆԸ
(Նամակ խմբագրութեան)

Բաթում, յուլիսի 4-ին
Մայր աթոռի պաշտօնական «Արարատ» իր

երկրին մինչև 10-դ դարի վերջը: Այս հարս-
տութեան վերջին իշխանը Ռուդոլֆ III է: Ժողո-
վուրդը սրան ծոյց, ձրիակեր, անմիտ, խեղաքար
մականուններն է տուել: Այս անմիտ իշխանը,
փողի պակասութեան պատճառով մաս-մաս ծա-
խում է իր իշխանութիւնը զանազան վասալնե-
րի վրա, վերջապէս նա յանձնում է իր ամբողջ
իշխանութիւնը և իրաւունքները Պրուսիայի թա-
գաւոր Հանրի II-ին: Վերջինը սկզբում չէ կարո-
ղանում տիրել Նիւշատելին, որովհետև Բուրգո-
նեան տոհմի մնացած ժառանգները այս դէպքը
համարում են անարդար և պաշտպանում են
իշխանութիւնը, իբրև հայրական սեփականու-
թիւն: Սակայն Պրուսիայի հետեւալ թագաւո-
րը, Կոնրադ II, զէնքի միջոցով վերցնում է Նիւ-
շատելը և իր ձեռք է առնում ամբողջ Բուր-
գոնեան իշխանութիւնը:—Բուրգոնեան հարս-
տութեան ժառանգները չեն լուծում: Նրանք եր-
կար տարներ կռիւ են մղում պրուսական կա-
ռավարութեան դէմ: Այս անաղղ և անօգուտ
կռիւներից օգուտ է քաղում հելլենական Կիւնո
անունով մի զօրապետ, վերցնում է Նիւշատելը
և վերջ է տալիս Բուրգոնեան իշխանութեան և
պրուսական բռնապետութեան: Օտարների տի-
րապետութիւնը վերջանում է: Կիւնոյի որդի
Իւրիկը դառնում է Նիւշատելի ազգային տոհմի
առաջին իշխանը:—Այսպէս Նիւշատելը ունե-
նում է իր հարազատ իշխանները մի քանի դար
օտարների լուծը կրելուց յետոյ:—Այս տան իշ-
խաններից մէկը Իւրիկ III մասնակցում է խա-
չակիւնների արշաւանքներին: Սրա օրով կաթո-
լիկութիւնը գործնականում է մի քանի վանքեր
են բացվում: Նիւշատելի իշխանութեան մէջ
ֆէօդալական սխաւեմը աւելի մեծ ծաւալ է ըն-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Է Ն

ՇՎԵՅՏԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԵՐԸ
Ն իւշատելի կանոնօրէն *

Նիւշատել, յուլիսի 16-ին
Նիւշատելը, ազատ Շվեյցարիայի կանոններե-
րից մէկը, այժմ տօնում է մի մեծ պատմական
մօմենտ, Նիւշատելի կանոնների ազատութեան
50-ամեակը: Սա այն օրն է, երբ վերջին ան-
գամ, 1848 թւին, Նիւշատելը ոտի կանգնեց
պրուսական բռնապետութեան դէմ, թօթափեց
օտարի լուծը, հաստատեց հանրապետութիւն և
մտաւ շվեյցարական դաշնակցութեան ծոցը:
Նիւշատելը այս ազգային տօնի հետ միացրել
է և յայտնի Tir fédéral—դաշնակցական հրացա-
նաձգութիւնը, որին մասնակցում են ամբողջ
Շվեյցարիան և ուրիշ երկրները:—Այս տօները
ունեն են մի քանի շարքեր: Այդ առիթով կը
փորձենք տալ «Մշակի» ընթերցողներին Նիւշա-
տելի համառօտ պատմութիւնը և ապա նկարա-
գրել այս մեծ ազգային տօները և հանդէսները:

Նիւշատելի կանոնները ներկայացնում էր մի
վայրենի երկիր: Ամբողջ երկիրը ծածկված էր
խիտ անտառներով: Ամեն տեղ գետեր, գետակ-
ներ, լճեր, ճահիճներ: Վայրի կենդանիները ա-
զատ, անվախ շրջում էին երկրի ամեն անկիւ-

* Այս յոդուածը գրելիս գլխաւորապէս օգտվել
ենք հետեւեալ աշխատութիւններից: «Histoire abrégée
du Canton de Neuchâtel» par Albert Henry, mem-
bre de la Société Cantonale d'histoire.

ների ու ջրանցքների համար, յոյս ունենալ, որ ուշադրութեան կառնի և այս կարևոր խնդիրը Մ. Ն.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Կ. Պօլիս, յուլիսի 8-ին

Ըստ կտակի բարեխիշտակ Յովսէփայ Եղմիրեանց՝ դորձադիր մնայուն յանձնաժողովը պատկանում է հրապարակել այն հեղինակներն ու բանասերներն՝ որք ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ ու և աշխատութեամբ կը փափաքեալ արժանանալ «Մասնակ-Մեքսիկո» պատկան մրցանակին, հաճին իրենց աշխատանքները ուղարկել մինչև յուլիսի 15-ը, որպէս յետագային 1899 տարու յուլիսի վերջը առ ամենապատիւ պարգևատրելու համար ի Կ. Պօլիս: Տպագիր երկերը պէտք է հարկաւ առնուի, որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագիրը մէկ օրինակ, որը, ինչպէս յայտնի է, ետ չեն դարձուիր: Յանձնաժողովը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են Բագուից, որ դպրոցական վարչութիւնը դիմել է Մարդասիրական ընկերութեան՝ պահանջելով նրա նպատակով պահված ծնական դպրոցի շինութիւնները և դպրոցական վարչութեան և դպրոցական վարչութեան մէջ բանակցութիւններ են սկսվել Մարդասիրական ընկերութեան տան մասին:

Ժողովրդական լուսավորութեան միջնորդութիւնը նորերս յայտնել է, որ օտար դաւանութեան դպրոցներում կարող են ընդունվել ուղղափառների երեխաները միայն այն դէպքում, երբ դպրոցի ուսուցիչը կը լինի ռուս ծագումով և ուղղափառ դաւանութեան անհոն:

Մասկվայի շրջակայքում մի հետաքրքիր փորձ է արված երկաթուղով գնացողների տոմսերը ստուգելու համար: Ներկայումս վարչութիւնը, աչքի առաջ ունենալով ուսանողները իր բարեխիշտութիւնը և ազնուութիւնը, հրապարակել է նրանց կատարելու ամսական ընթացքում կոտորածների պատճառով այն գնացքների վրա, որոնք նշանակված են՝ Մասկվայի և նրա շուրջը գտնվող ամառանոցների մէջ երկաթուղիին առնուելու: Ուսանողները արդարացի իրանց վրա դրած յոյսերը: Նրանք շատ ճիշդ և արագ կերպով կատարում են իրանց պարտականութիւնը, ստանալով ամեն մի գնացքի ստուգութեան համար 1 ր. 50 րոպէս և այդպիսով կարողանում են ամսական ձեռք բերել մինչև 60 րոպէս, որ ուսանողի համար շատ աչքի ընկնող վարձատրութիւն է:

Անգլիացի Զեֆֆերսոն, որ ներկայումս ծանապարհորդում է Ռուսաստանում և արդէն այցելել է Լեհաստանը, Մալոբուսիան և Սիբիրը, սկսել է տպագրել իր ծանապարհորդական տրւպատրութիւնները: Շատ բան Ռուսաստանում ապացուցել է միտքը Զեֆֆերսոնին, իբրև անդրկայան: Նրան դարձացրել է մանաւանդ ռուս գիւղացիների աղքատութիւնը: Նա ասում է, որ սկզբում առանց խորին վշտի չէր կարողանում տեսնել ողորմելի ռուս գիւղերը: Նրան դարձացրել է և ռուսաց երգերի տխուր եղանակը, այդ երգերի մէջ նկատվում է ինչ որ հոգեկան ճնշում: Այդ ճնշումը զգացվում է նաև գիւղացիների ընթացքի և կատարած բոլոր գործերի մէջ: Անելի ուրախ տպագրութիւն են թողնում Սիբիրի գիւղացիները: Ռուսաստանի ժողովուրդը, ասում է անգլիացի ծանապարհորդը, աղքատ է, բայց նրա հոգի ծոցերը լի են հարստութիւններով: Ռուսաստանին սպասում է լաւ ապագայ, եթէ նա աւելի շատ կը մշակվի: Մի քանի ռուսներ մի տեղ այն կարծիքը յայտնեցին միտքը Զեֆֆերսոնին, որ ռուս գիւղացին բարոյապէս աւելի առողջ է, քան արևմտեան-եւրոպական գիւղացին, որովհետև նա պահպանել է կրօնասիրութիւնը և սովորել է չարքայ կեանքի: Այդ առիթով անգլիացին ասում է. «Այդ շատ լաւ է, բայց ես կարծում եմ, որ ռուս գիւղացին դեմ է չէր լինի, եթէ նա կարողանար կուլտուրայի, ազգային և ընդհանուր և չը տեսնել իր երեխաների մասկան ահապին քանակութիւնը: Իր ծանապարհորդութեան ժամանակ միտքը Զեֆֆերսոնը շատ անախորժութիւններ է հանդիպել կառավարչական պաշտօնեաների կողմից, որոնք կասկածով էին վերաբերվում նրան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ ԵՆ: Մի քանի գիւղերի այցելներում սկսել է երկաթ Claclasporum Roesleri կոչված հիւանդութիւնը, որ տեղացիների մէջ յայտնի է «չխտա» անունով: Նա բուժում է նախ խաղողի տերևները, յետոյ անցնում է պտուղներին, երբ պտուղը բաւա-

կանաչափ ջրակալում է, կոթին կպած նրա մասը սնանում է և կուչ է գալիս: Միւս մրգերը այս տարի առատ են, մանաւանդ ծիրանը, թրթուռը թէև վնասեց ծառերին, բայց բերքը շատ էր ուժեղ և դիմացաւ թրթուռի աւերումներին:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Իժուար պայմանները մէջ ենք դնում, հայ չը կայ շուկայում: «Վախ՛ախ՛ տակ բերած ցորենը մի քանի օր առաջ ծախվում էր պոպո 1 րուբլի, մի քանի թուրքեր աղմուկ բարձրացրին, թէ լինող է և պէտք է ինչեցիկ մինչև 80 կ.: Այդ պատճառով գիւղացիները ցորեն չեն բերում բազար... Ազգաբնակչութիւնը շուրջաւ է մնացել ապր. հանգամանքի պատճառով: Ապա քաղաքային վարչութիւնը, կը հարցնէ ընթերցողը, ինչ է անում. նա գլուխ չունի մտածելու քաղաքի կարիքների մասին, վարչութիւնը ներհում է «անգործ ունեւորութեան մէջ»:

ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻՆԻ գաւառի Փառակա գիւղից մեզ գրում են. «Մինչև այժմ մեր ժողովուրդը մի փոքր հանգստացել էր վաղապիտան մարդիկ նոր-նոր սկսել էին առանց վախ՛ախ՛ալու գնալ արտերը, կամ հարկան գիւղերը, բայց այդ հանգստութիւնը երկար չը տևեց: Նորից ասպարէզ կեանք աւազակները: Յունիսի 22-ին մեր գիւղացիները մէկը, Գարստեան անունով, ինչ որ գործի համար գնում է Նախիջևան և այնտեղից վերադառնալիս, երբ մտնում է «Վառաքանա» կոչված երկիւղալի ձորը, յանկարծ նրա առաջ յայտնվում են երկու թուրք աւազակներ և կանգնեցնում են նրան, կողոպտում, անասելով տանջանքներով չարաչարութիւններով վերադառնալով տուն, երբ օր հիւանդ պառկած մնաց և ապա մեռաւ: Պօլիցիան որոնում է աւազակներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Սերվերայի նաւատորմը ոչնչացրել, Սանտո-ճագոն անձնատուր եղած ամերիկացիներին, սպանիական Ներոտութիւններ, ամերիկական ուրախութիւններ, տոներ, հանդիսաւոր մաղթանքներ: Սրանք պատերազմի արտաքին փայլերն են: Նայելք մեզալի միւս երեսին: Սպանիայի ծովեզերքից տեղերից տոնացվում են տեղեկութիւններ թէ ինչ տպագրութիւն գործեց Սերվերայի նաւատորմի ոչնչացումը: Ֆերրոլում նաւատորմի մայրերը, կանաչը, ջրերը և աղ-ջիւղները պաշարում են խնայողութիւնները և կառավարչական հիմնարկութիւնները՝ աղետի մանրամասնութիւններն իմանալու համար: Վաֆէները և թատրոնները դատարկ էին: Ամեն տեղ լսվում էին հեծեմաններ: Լրագիրները ձեռքից-ձեռք էին խլվում, պատմա-պատմա-դաւանալով. ամեն մէկը աշխատում էր հեռագրական համառօտ տեղեկութիւններից գուշակել թէ ինչ է դառն իր մերձաւոր բարեկամը կամ սիրելին: Մի պատահ էլ, որ աղբւր էր մուրալով, իր հաւաքած գրօններով գնաց բոլոր լրագիրները, որ կարողացաւ գտնել, և հեկեկալով խնդրեց անցնող մի պարոնին կարգաւ արդեօք նրանց մէջ կայ մի որ և է տեղեկութիւն իր որդու մասին: Կատարելով նրա ցանկութիւնը և յուսադրելով որքան հնարաւոր է, պարոնը ուզեց փող տալ նրան հաց առնելու: «Մի՞թէ կարելի է հաց ուտել, չիմանալով որդու վիճակը», լալով պատասխանեց խեղճ կինը: Սրտանկով տեսարաններ են կրկնվում այժմ համարեա ամեն մի սպանիական աշխատաւոր ընտանիքում, մինչդեռ հարուստ երկրասարգները ազատ ման են գալիս և սովորականի պէս անգործ են: Նոյն իսկ այժմ էլ Սպանիայում մտքած չէ ընդհանուր գիւղերաբարոյութիւնը և հարուստները ազատվում են սարսափելի վտանգից, վճարելով 1½ հազար պեսետ (1 պեսետը 1 ֆրանկ է): Միայն այս հանգամանքը բոլոր օրինակներ մարդկանց գրգռում է սպանիական կառավարութեան դէմ:

Սպանիական լրագիրները սարսափելի մեղադրանքներ են տպում իրանց կառավարութեան դէմ: Անա ինչ է ասում «La Publicidad» լրագիրը. «Կառավարութիւնը ստեղծեց զենքաւորների մի ամբողջ բանակ և նրանց վրա թափեց չքանչանքներ և տխուրանքներ միայն այն նպատակով, որ նրանք զորքի մէջ համակրութիւն պահանքներ թափեցին իրարմէս: Նա տուեց ծովային միջնորդութեան միջոցների մի կողմ լոկ այն պատճառով, որ արտասանմանում—Լոնդոնում, Պարիզում և Բերլինում պարագ կեանք անցկացնեա ամբողջ յանձնաժողովներ, որոնք որդէս թէ պիտի լաւացնէին սպանիական նաւատորմը և ստանում էին չար ուժիկներ: Նա աւելացրեց արքայախնայողների և եպիսկոպոսների

ընթերցան: Նա ազատ մտածող տուեց բոլոր վաճառական կարգերին, որոնք վաճառվում էին Ֆրանսիայից և թող տուեց, որ եղութիւնները ուժեղանան և հաստատվեն սպանիական հողի վրա: Մի և նոյն ժամանակ նա կոմսերի, չեր-ցօգների և մարկիզների տիրույթներ տուեց զանազան գիւղեկամաւորների, նպարավաճառների և վաճառականների, որոնք հարստացել էին կապալներէ, երկաթուղային ձեռնարկութիւններից, պետական մեքանիզմներից և բարոյային գործողութիւններից: Նա վառեց միջին դասակարգերի ազատութիւնը, բաց թողնելով անթիւ արժէթղթեր և խլեց նրանց բոլոր խնայողութիւնները, որպէս զի դրանց պահէ հպատակութեան մէջ ամենալաւ սանձի—զբ-պանի շահերի միջոցով: Եւ յանկարծ նրա կողմնակիցները համարձակվում են հաստատել թէ այժմեան բոլոր դժբաղդութիւնները մէջ մեղաւոր են հանրապետականները և հասարակական կարծիքը»:

Ջարտերի աղետը բաց է արել, ինչպէս միշտ և ամեն տեղ, սպանիական կեանքի խոցերը: Հարց է. ինչ կանէ սպանիական ազգը այդ խոցերը բժշկելու համար:

ԻՍԼԱՄ ԵՒ ՊԱՏԵՐԱՋՄ

II

Հեթանոս աշխարհը չէր դիմացաւ զինված խաղաղութեան: Պարսկաստանը առաջինն էր, որ հրաժարվեց իր Ձենդ-Աւեստայից և զրկեց զուրադը: Մնաց մի ուժեղ ակոյիսան—քրիստոնէութիւնը: Ինքը, Մուսամէդ, իր ձեռքով նուաճել էր քրիստոնէութիւնը դաւանող արաբական ցեղերը, հարկադրել էր նրանց հեռանալ Մարիամի որդու կրօնից: Մի այդպիսի դաս էլ նա պատրաստվում էր տալ Բուզանդիային՝ բայց այն ժամանակ, երբ նրա ֆանատիկոս զօրքը պատրաստվում էր արշաւել դէպի Սիրիա և այնտեղից դէպի Բելուզիստան սահմանները, մահը վրա հասաւ և վերջ դրեց արիւն և աւերանք բարոյաւ մարդաբէլի կեանքին: Կոլը անցաւ նրա յաջորդներին, տեղը ամբողջ դարեր և հասաւ այն աստիճանին, որ քրիստոնէութիւնն էլ զինվեց ու մահմետական սրբազան պատերազմի դէմ հրատարակեց քրիստոնէական կրօնական պատերազմ: Սրբնորդները քաղաքային տասնեակ հազար խաչակիր կամաւորներ անցնում էին Փղը-Առիա, կոտորվում էին ահապին քահալութեամբ Սակայն երկու հարիւր տարվայ ընթացքում ոչ Սերուպայից եկող նոր արշաւանքները, ոչ առաջին խաչակիրների հիմնած Սրուսաղէի թաղաւորութիւնը չը կարողացան կոտրել իսլամի ոյժը: Արաբները անհետանում էին ասպարէզից, բայց նրանց փոխարեն առաջ էին գալիս մոնղոլական ցեղերը, որոնք Միջին Ասիայից առաջ գալով, ընդունում էին իսլամը և նոր ու աւելի սաստիկ անդրկութեամբ գործադրում էին մարդաբէլի սուրբ: Այդ ցեղերից մէկին վիճակված էր կատարեալ յաղթութիւն տանել քրիստոնէաների դէմ: Դա մի փոքրիկ թափառական և խաչնարած ժողովուրդ էր, որ քիչ էր մնում կորչի, անհետանայ Փղը-Առիայի լեռներում, բայց մի դարմանալի բախտի տիրաւորով, մեծացաւ, ուժեղացաւ և կազմեց Օսմանեան պետութիւնը:

1453 թ.ականը, երբ ընկաւ Կ. Պօլիսը, այդ ցեղի յաղթանակն ամենամեծ և ամենափայլուն ժամանակն էր: Միջագետքից մինչև Կարպատեան օրերը քրիստոնէութիւնը բոլորովին տրորված էր, ամենամահաւոր ստորացման ենթարկված: Ներկա հարիւր տարվայ ընթացքում թիւրքերն ներկայացնում էր մահմետական աւելելի փառքն ու պարծանքը. միայն նա էր, որ բարձր էր պահում իսլամը զբօսաւ, միայն նա էր, որ առաջ էր տանում մարդաբէլի կտաւած գաղափարը: Սերուպայի զոհում էր այդ աւելի աւետարանից համաշխարհային տիրապետութիւնը:

Բայց ժամանակները փոխվում են: Նկաւ այն ժամանակը, երբ հրապարակում հարց վճռողը մահմետական զինված ամբոխի ֆանատիկոսութիւնը չէր, այլ գիտութիւնը, մարդկային առաւելագիտութիւնը: 1690 թ.ականին թիւրքերն ստիպված եղաւ խաղաղ դաշնադրութիւն կնքել Կարօլիցիում: Այդ ժամանակից մահմետականութիւնը իր կրօնական պատերազմով դատապարտված էր անխուսափելի անկման: Վիէնայի պարիսպների տակ ջարդվողները օսմանեան զօրքերը չէին միայն, այլ և իսլամի ողբին: Միւսուհետ և կամայ կամաց, բայց հաստատ քայլերով կրօնական պատերազմը զրորվեց դէպի անգլոսի: Թէ օսմանեան պետութիւնը, որ նոր էր սկսել քայլալու և թէ Պարսկաստանը, որ վաղուց էր փտել շատ մեծ յոյսեր ունէին կրօնական պատերազմի վրա, երբ հաջողվեցին էին լինում

ընդհարվել Ռուսաստանի հետ: Կարծելով թէ բաւական է բարձրացնել մարդաբէլի կանաչ գրօշակը, որպէս զի ամբողջ մահմետական աշխարհը Աֆրիկայի խորքերից սկսած մինչև Ձի-նաստան ողբի կանգնէ, իսլամի առաջնորդները այնքան անձնապատասխան և դուռդ էին դառնում, որ շատ անգամ նոյն իսկ առանց լաւ պատրաստութիւնների նետվում էին պատերազմի դաշտը և, ի հարկէ, լաւ ջարդվում էին:

Մտաբերել մի քանի փաստեր հենց մօտիկ անցեալից: Նախ քան 1826 թ. արշաւանք սկսելը, պարսից կառավարութիւնը խումբ խումբ մօլլաներ էր ուղարկում Անդրկովկաս՝ տեղային մահմետականներին ապստամբեցնելու յանուն կրօնական պատերազմի: Մահմետական ամբոխը, պէտք է խոստովանել, հեղուկեմամբ է գրգռվում և գնում իր մօլլաների ետևից: Համարեա ամբողջ Անդրկովկասի մահմետականութիւնը ապստամբեց և գնեցաւ Նրմոյով յուսահատված դրամ էր Պետերբուրգ, որ այլ ևս յոյս չուներ: Բայց ինչ դուրս եկաւ ֆանատիկոս մաստայի ապստամբութիւնից: Ոչինչ: Բաւական էր մի ուժգին հարուած հասցնել պարսից զօրքերին և ահա ամբողջ կրօնական պատերազմը ջուրն ընկաւ:

Մի և նոյն միջոցին զինեց թիւրքերն 1828 և 1855 թ.ականների պատերազմների ժամանակ: Նշանաւոր է մանաւանդ վերջին թակաւնը: Այդ ժամանակ Կովկասեան լեռներում կրօնական պատերազմ էր մղվում ռուսների դէմ, թուրք էր թէ ռուսական է, որ Անդրկովկասի մահմետականներն էլ ողբի կանգնեց և ահա մի կողմից նրանք, միւս կողմից թիւրքաց զօրքերը և երբորդ կողմից Շամիլի միւրիդները կարող են վերջացնել ամեն ինչ: Բայց դա ապարդիւն ակնկալութիւն էր: Վերջին ռուս-թիւրքական պատերազմից առաջ անաւոր լուրեր էին տարածվում Կ. Պօլիս: Ասում էին թէ Միջին Ասիայի, Հնդկաստանի, Աֆրիկայի և այլ տեղերի մահմետականներից պատգամաւորներ են հաւաքվել սուլթանի մօտ և մի համալսման կաշնակցութիւն են կազմում զեաւորների դէմ: Բայց Ռուսաստանը ջարդեց թիւրք զօրքերը, անդամահատեց Օսմանի պետութիւնը և ոչ մի մահմետական չը վերկացաւ տեղից, եթէ չը հաշուենք Շէյխ-Ֆէյզալդինի և Ուբեյդուլլահի վայրերի հրոսակները, որոնք ռուսների տարած յաղթութիւնների վրէժը հանում էին, կոտորելով անպաշտպան հայերին:

Անցեալ տարի անազին աղմուկ յարուցեց Հնդկաստանի ապստամբութիւնը: «Համալսմանականութիւն», կանչվում էին եւրօպական լրագիրները և ամենահանդիսաւոր կերպով հաւատացնում էին, որ եթէ սուլթանը կամենայ, անգլիացիներին կը վռնէ Հնդկաստանից: Բայց մի կարճ միջոցում անգլիական զինուորները խնդրեցին ապստամբութիւնը: Մի վերջին, որդրմելի փաստ էլ անցեալ մայիսին տեղի ունեցաւ Ֆերդանեան նահանգում: Եւ ինչ դուրս եկաւ:

ՆԱՄԱԿ ՐՈՒՄԻՆԱՅԻՑ

Կ օ ն ս տ ա ն ց ա, յուլիսի 7-ին

Ներկա շաբաթ առաջ պատիւ ունեցանք մեզ մօտ հիւրասիրել Բէրեկի որբանոցի տնօրէն պատուոյ Բրոնիսլաւ և վարժուհի օր. Միլլէրին: Առաջուց մամուլի մէջ կարգացած լինելով նկատողութիւններ այն մասին, թէ արդեօք որբանոցները կապ չունեն Գերմանիայի զարգեցնականութեան հետ, կամեցանք լսել այդ գործի ծագման մասին ճիշդ տուրք, որ մի քանի խօսքով հաղորդում ենք «Մշակի» ընթերցողներին, կասկածները փարատելու համար: Երբ երկու տարի առաջ կամենում էին գործը սկսել, դրան անստիճակ հակառակ էին թէ Կ. Պօլիս գերմանական դեսպանութիւնը և թէ թիւրքաց կառավարութիւնը: Երբ առաջին անգամ դիմեցին գերմանական դեսպանին և յայտնեցին իրանց միտքը ու խնդրեցին, որ այդ հիմնարկութիւնները առնի իր պաշտպանութեան տակ, դեսպանը ասաց, որ խնդրութիւն է այդպիսի ժամանակ գնալ երկրի ներքերը հայ որբերին խնամելու համար, որ այդ անկարելի բան է, և որ նրանք այնտեղ կամ կը սպանվեն, կամ թէ անպաշտպան դառնան՝ աւելացնելով, թէ ինքը երբեք չի առնի այդ հիմնարկութիւնները իր պաշտպանութեան տակ: Դեսպանը սկսել է համոզել, որ թողնեն այդ դիտաւորութիւնը: Բայց սրանք յայտնել են, որ վճռական գործ է և պիտի սկսեն ու Բերլին դիմելով պաշտպանութիւն պիտի խնդրեն: Դեսպանը ասել է, որ այդ գործը բոլորովին հակառակ է Գերմանիայի բարգաւաճանութեանը: Ինքն էլ իր կողմից հաղորդել է Բերլին՝ արտաքին գործերի մինիստրին. գործը հասել է կայսրին: Վերջապէս յայտնել են գոր-

ծի սկսողներին, թէ կառավարութիւնը չէ կա-
րող որոշումները իր պաշտօնական տակ
առնել, այլ միայն մասնաւոր դէպքերում թող
զիմեն դեպքաւորութեանը: Բ. Գրուշին էլ շատ
խոշորութեամբ է յարուցել իսկ այդ անվան մար-
դիկը միշտ առաջ են գնացել և որոշումներ
հիմնել Փոքր Ասիայում: Բացի դրանից այդ մար-
դաւորները Ամասիայում մեծ կարգաւոր են գնել
և այնտեղ մեծ շէնքեր են շինում, ուր որեւ-
նոցներէն արձակվողները պիտի սովորեն դա-
նազան արուեստներ, այդպիսով իրենց, դիւզա-
տետեսութիւն և այլն: Արդէն գնացել են այն-
տեղ մասնագէտներ և պատրաստութիւններ են
տեսնում: Նրանց ծանապարհը անցնում է Կոնս-
տանդուպոլիս և մենք առիթ ենք ունենում դրանց
այստեղ տեսնել և ծանօթանալ նրանց հետ:
Ամենքն էլ Քրիստոսի սիրով լցված մարդիկ և
կանայք են, և ուրիշ նպատակ չունեն, այլ մի-
այն խնդր որոշել բարեկաւութիւնը: Մենք բազմ-
աւոր ենք համարում այն որոշումներ, որոնք
դատարանակալում և կրթվում են այդպիսի մարդ-
կանց հակադրութեան տակ: Այսքանը բաւական
է: Ապագան աւելի պարզ ցոյց էր տալ, թէ ինչ
են այն որոշումները, որ Գերմանիայի քրիստո-
նեաները հիմնեցին Փոքր Ասիայի գանազան քա-
ղաքներում: Պ. Թաւադանց

ԽԱՆԼԻ ԼՈՒՐԵՐ

Մտկելայի «Երմիտաժ» այգու բաց բեմի վրա
ներկայումս Բատուաս անուանով երկու անձ շատ
հետաքրքիր խաղեր են ցոյց տալիս: Նրանցից
մէկը վերջինիցի վրա նստած, զիւրկայր, ըը-
շում է վերջինիցի բեմի առաստաղով: Նա իր
ատամներով պահում է մի տրպակցիկ, որի
վրա նրա ընկերը գանազան մարդկութիւններ է
կատարում: Ենթադրում են, որ վերջինիցի
առաստաղի երեսին պահպանվում է երեքտա-
կան ուժեղ մագնիսների միջոցով, որոնք սա-
կայն անկաւորել են միմեկին նայողներին համար:
Այդ խաղը շատ մեծ ազդեցութիւն ունի:

Գերմանական կայսրութիւնը բաղկացնող փոքր
երկրներէն մէկը իշխանը, Լիպպէ կոչված իշ-
խանութեան ինքնակալ կոմս Էրնստը ընդդէմ է
ներկայացրել կայսրութեան դաշնակցութեան
խորհրդին՝ գերմանական կայսր Վիլհելմ II-ի
դէմ: Գերմանական լեզուները անա ինչպէս
են պատմում այդ լեզուները: Լիպպէի իշխանը
գանազատ է տալիս կայսրին, որ իր իշխանու-
նութեան մէջ գտնվող սպանները գինորական
պատիւներ չեն տալիս իր որդուն և յարգանք
չեն մատուցանում իրան: Նա մի անգամ կան-
չում է գնեկայրին և նկատուութիւն է անում
այդ մասին: Գնեկայրը պատասխանում է, որ
ցանկութիւն չունի իշխանից հրամաններ ստա-
նալ: Իշխանն իսկույն գանազատվում է կայսրին,
որից և ստանում է հետեւեղ հեռագիրը: «Իմ
գնեկայրը հրաման ունէր ցոյց տալ ձեզ այն,
ինչ որ հարկն է: Եւ ինչ որ ունի: Խորհուրդ եմ
տալիս ձեզ այդ տօնով նամակներ չը գրել
ինձ: Վիլհելմ կայսր և թագաւոր: Լիպպէի
իշխանը իսկույն հաղորդեց կայսրի այդ հեռագի-
րը միւս զաւակից իշխաններին և յանձնեց իր
ներկայացուցչին ընդդէմ ներկայացնել կայսրի
դէմ դաշնակցական խորհրդին: Իսկ իշխա-
նութեան օրդան լրացում տալով է մի յո-
ղուած, որով ընդդէմ դաշնակցի իշխանները հրա-
ւիրվում են յանուն արդարութեան, իրաւունքի
և սանձաւարութեան, չարք բարձրացնել այդ
դէպքի առիթով, ի նկատի ունենալով, որ Պը-
րուսիայի գերիշխանութիւնը անաւանելի է դառ-
նում:

Անդրկովկասից հեռացած դուստրոնիցի մի
քանի ընտանիք գաղթել են Կիւրսու կղզին, իսկ
«Daily Chronicle» յայտնում է, որ Եսէկիւսում
արդէն ընտանիքներ են հաստատել երկու դու-
ստրոն ընտանիք և շուտով կը միանան նրանց
հետ մի քանի ընտանիք ևս, և այդտեղ դուստ-
րոնիքի մի ամբողջ գաղթականութիւն կը հաս-
տատվի:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՆԻՒԵՐՈՎ, 17 յուլիսի: Խաղաղութեան պայ-
մանները գլխաւոր կէտերը, անկասկած, հետե-
ւեալներն են: Սպանիան հրաժարվում է գերիշ-
խանութիւնից Կուբայի վրա: Կուբայի ազգա-
բնակչութիւնը իրաւունք է ստանում ընտրելու
մշտական կառավարութեան ձև, Ամէրիկայի հո-
վանաւորութեան տակ: Սպանիան անպայման
Ամէրիկային է յանձնում Պորտո-Րիկո: Ֆիլիպ-
ինան կղզիների հարցը վճռվում է Կոնֆէրէն-
ցիայի կամ կոմիտայի օգնութեամբ: Ամէրիկան
կը պահանջի, հաւանորեն, Ֆիլիպինեան կղզի-
ներից միայն մէկը:

ՄԱԿԻՒԻ, 17 յուլիսի: Պաշտօնական հեռագիր

Պորտո-Րիկոյից. «700 կամաւորներ յետ մղեցին
ամէրիկացիներին, որոնք մտնեցին էին Եստ-
կոն: Ամէրիկացիները յետ քաշվեցին գէպի ի-
րանց նախկին դիրքերը»:

Յայտարարված է, որ թագաւորի հիւանդու-
թիւնը բնական ընթացք ունի:

ՊԵՏԵՐՉՈՅ, 16 յուլիսի: Յուլիսի 16-ին, ա-
ռաւոտեան ուղիղ 11 ժամին, Կայսերական զը-
նացքով հասաւ ռումինական թագաւորը՝ թա-
ղածառնիկի և ուլիսայի հետ միասին: Կայս-
րանը զարդարված էր ծաղկափնջերով, ուստաց
և ռումինական դրօշակներով: Ծանապարհի վրա
մեծ բազմութիւն կար: Երբ գնացքը մտնեցաւ,
երաժշտութիւնը անց ռումինական ազգային
օրհներգը: Դիմաւորելու համար կայսրան եկան
Թագաւոր Կայսրը, Պետերբուրգում գտնվող ընդ
Մեծ Իշխանները, Թագաւորի ավետան, պալատի
և արտաքին գործերի մինիստրները: Վազօնից
դուրս գալուց յետոյ, ռումինական թագաւորին
և թագաժառանգին ուղղուեց Թագաւոր Կայս-
րը: Թագաւորի հետ և Մեծ Իշխանները ուղի-
ցութեամբ անցնելով պատաւոր պահակախմբի
առջևից, Թագաւոր Կայսրը կայսրանից հեռա-
ցաւ ռումինական թագաւորի հետ միասին, իսկ
թագաժառանգը—Մեծ Իշխան Միխայիլ Ալեք-
սանդրովիչի հետ: Ծանապարհի վրա երկկարգ
կանգնած էին զօրքերը: Նորին Մեծութիւնը
ռումինական թագաւորի հետ և թագաժառանգը
Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչի հետ զը-
նացին Ալեքսանդրիա՝ այցելելու Թագուհի Կայս-
րուհիներին, որտեղից Թագաւոր Կայսրը ծա-
նապարհ գցեց ռումինական թագաւորին Պետեր-
նոֆի Մեծ Պալատը: Միմիստր-նախագահ Ստուր-
ձա կայսրանից գնում էր պալատը արտաքին գոր-
ծերի մինիստր կոմս Մուրադովիչի հետ միասին: Յե-
րեկվայ մէկ ժամին Պետերնոֆի պալատում, Մեծ
դահլիճում, կայացաւ ընտանեկան նախաճաշ,
ներկայութեամբ կայսերական զոյգի, այլի Կայս-
րուհու, Մեծ Իշխանների և Իշխանուհիների, յու-
նաց թագուհու, յունաց արքայադուի Անդրէյի, և
Սիամի պրինցի: Նախաճաշից յետոյ ռումինա-
կան թագաւորը և ռումինական թագաժա-
ռանգը պրինցը այցելութիւն գործեցին Մեծ Իշ-
խաններին և Իշխանուհիներին: Երեկոյեան, 8
ժամին, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի
Միխայիլովա ամարանոցում ճաշ կար:

ԽճԱԳԻՐ՝ ԱԼԼԻՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՐԷԼԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԲՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի
կիրակի օրերից:

Ա. Ռ. Ս. ՈՒՍՏԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վերնախնայի (սիֆիլիս) և միզապեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿԱ. Ի. ՐՈՒԿԵՆԿՈ—10 1/2—11 1/2 ժ. մի-
զանոց և երեխայից հ., ծաղկի պատուաս-
տում:

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11 1/2—12 ժ. կա-
նանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1 1/2 ժ. ներքին և
երեխայից հ.

Ա. Գ. ԳՈՐԻԿՈ—1 1/2—2 1/2 ժ. ներքին, և մի-
զապեռական հ. ախաշի, կոկորդի և քթի հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Վ. Մ. ՄԱԽՈՎԻԼԱՆԸ—6—7 ժ. ներքին և երե-
խայից հ. նեարդային և ծորթի հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6 1/2—7 ժ.
Տ. Ի. ՐՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցում քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէկի, իրի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 Կ. չքաւորները ձրի: Համախորհրդի
(Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերաւանդ՝

146—150 Բժշկագետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Լ ո յ ա տ ե ս ա լ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՐ

Հ Ե Ն Ր Ի Կ Ս Ե Ն Կ Ե Վ Ի Զ Ի

ՅՈՒՆԵՐԱՍ

(QUO VADIS)

Վէպը, Ներօնի ժամանակից: Լեհերէնից թարգմ.
ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆՑ:

(742 մեծադիր երես)

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

Դիմել՝ ТИФЛИСЬ, Арианское Издательское
Общество. (2.) 14—20

ԵՓԵՍՍՈՅ ՏԵՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆՑ, ՆՈՒՆԷ ՏԵՐ-ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱՐԱՄԱԿԻՍԵԱՆՑ ԻՐ
զաւակներով, ՏԵՐ-ՇՄԱԽՈՆ և ՏԵՐ-ԲԱՐՍԵՂ ՏԵՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆՆԵՐԸ սրտի ցաւով յայտ-
նում են ի գիրութիւն իրանց բարեկամների, ծանօթների և ծխակահներին, առաջը-
նը իր սիրելի ամուսնու, երկրորդը իր անմուսնայի հօր, երրորդները իրանց թանկագին
մեծ հօր և չորրորդները իրանց եղբոր՝ Զրկինեանց ա. Կարապետ եկեղեցու միաբան:

ՆԵՐՍԷՍ ԱՒԱԳ ԳԱՀԱՆԱՅ ՏԵՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆՑԻ

մահը: Հոգեհանդիստը լինելու է ամեն օր երեկոյեան 8 ժամին: Թաղման մասին առան-
ձին կը յայտարարվի: Բնակարանը նոյն եկեղեցու գաւթումը:

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ յայտնում է ի գիտութիւն ընդհան-
րութեան, որ կեղտատեղերը մաքրելու և անմաքրութիւնները դուրս տանելու համար
սահմանված կանօններին § 13-ի ծանօթութեան համաձայն, կեղտատար տակառա-
կաւորները ՑԵՐԵԿՎԱՅ ԵՐԵՐԵԿԵԿԱՆՈՒԹԻՒՆԸ թող չէ արվում հետեւեղ փողոցներով. Գոյո-
վինսկից, Դիօրցօփայա, Միխայիլօփայա, Բարիստինսկայա, Երեւանեան հրապարակ, Մի-
ջին փողոց, և Սիօնի փողոց, մինչև Մէլլաւնը:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

սրանով յայտնում է ի գիտութիւն Թիֆլիսում գտնվող անշարժ կալերի տէրերին,
որ դուռնայի այս տարվայ մարտի 2-ի որոշմամբ, ներկայ 1898 թ-ի համար սահման-
վել է ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ, կարւածքի գնահատութեան 100/0-ի չափով,
որը կը կազմի սովորական գնահատական տուրքի 1/12 մասը: Լրացուցիչ տուրքը վճա-
րելու ժամանակամիջոց նշանակվում է յուլիս ամիսը: Յուլիսից յետոյ տեղի ունեցող
վճարումներին համար կը վերցվի տուգանք, գնահատական տուրքի համար որոշ-
ված քանակութեամբ:

2—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԵՐՈՒՐՈՐԻ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ծանապարհով
հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Առաջինի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտ-
րական Քուլաւանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Քուլաւանութիւն համընդհանուր, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանօնադրութիւն և 7) Գեղադրութիւն, վատ
ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև
8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոյակում, Ալեքսանդր Քրիթօսովի
տանը, № 9, Սերգեյեւսկայա և Նազօրնայա փողոցների անկիւնում: Մրադիրը
և կանօնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Մօվիանովների բանկային
գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում
են՝ Тифлис, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 11—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանօնաւոր և ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլիս: Մեկնում է Բաթու-
մից՝ չորեքշաբթի, 22 յուլիսի (3 օգոստոսի) ՄԻՆԳՐԷԼԻ չորեքշաբթի, նաւապետ ՇԵԼՏ: Եւ այսպէս շա-
բաթական, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոնաւաններ տրվում են սովորականից
պակաս գինով:

Ապրանքների և ծանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալատներին:

ԲԱԹՈՒՄԻՍՏ—պ. Վիկտոր դ'Արնօն, Նաբէլէմայա: ԹԻՖԼԻՍԻՍՏ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիօնի փող. Նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒՄ—պ. Ս. Դիլլարեանին, Կօլիբեա-
կինայա հրապարակ: ՆՈՎՐՈՍՍԻՅԱՎ—պ. Մեխիսթ Հերչեւորդերին: (Ե. հ. չ.) 12—20

Ֆիլանսների միևիատրի թոյլուութեամբ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова).

Կուրսերի նպատակն է տալ ունիվերսիտետի մասնագիտական-առևտրական կրթութիւն
և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ և
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուլաւանութիւն և թուլաւանութիւն համընդ-
հանուր, 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բան-
կային, 3) Առևտրական թղթակցութիւն, 4) Առևտրական տնտեսագիտութիւն 5) Առև-
տրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղադրութիւն և արաբագրութիւն (ուղղումն
ձեռագրի):

ՊԱՐԱՊՐՈՒՐՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ից:

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և եղբ. Մովսիսեան և ընկ.
ԲԱԳՈՒՄ բաժանմունքում: Օտարաբաղադրացի ունիվերսիտետի յարմարութեան համար
կուրսերում ընդունվում են գիշերօթիկներ: Կուրսերի կանօնադրութիւնը (УСТАВЪ) և
մանրամասն ծրագիրը—տրվում են և ուղարկվում են ձրի ապար: Օտարաբաղա-
դրացիները դիմում են կուրսերի հիմնադրին՝ БАКУ, А. П. Теръ-Ованесову, (հ. չ.) 5—25